

ERCONTINENTAL PHOENICIA

Armenian Week
Հայկական Շաբաթ

Join us for dinner at Mosaic, and discover the culinary WORLD OF ARMENIA. Live entertainment on piano and violin with folk dance. If you'd like to take home a souvenir, visit our retail corner where you can select beautiful carpets, rugs, paintings and sculptures.

Price per person: For your reservations and information, please call: 01 - 357 357

from: Tuesday July 1st till: Monday July 7, 2003

ԱԶՏԱԿ

— օրվաթերթ —

AZTAG QUOTIDIEN POLITIQUE ET LITTÉRAIRE جريدة يومية سياسية وأدبية - البيرة السؤولة، إيشا درويشيان

1500 L.Ո. 76րԳ ՏԱՐԻ, ԹԻԻ 93 (21435) ԵՐԵՎԱՆԻ, 1 ՅՈՒՆԻՍ 2003 10 ԷՁ

ՆԱԽԱԳԱՀ ՔՈՉԱՐԵԱՆ ՖՐԱՆՍԱ ՊԻՏԻ ԱՅՅԵԼԷ

Հայաստանի նախագահ Ռոպերթ Քոչարեանի մամուլի քարտուղար Աշոտ Քոչարեան էրէկ լրագրողներու ներկայացուց նախագահ Քոչարեանի յառաջիկայ աշխատանքային ծրագիրները: Նախագահը պաշտօնական այցելութիւններ պիտի տայ Պուլկարիա, Ռումանիա, Հնդկաստան, Ուկրաինա, իսկ Պրիբալթի մէջ պիտի մասնակցի ՕԹԱՆԻ եւ Եւրոպական Միութեան հանդիպումներուն: Կը նախատեսուին Թուրքիոյ հետ եւ Լաթվիոյ նախագահներու եւ Նորվեգիոյ վարչապետին այցելութիւնները Հայաստան: Նախագահ Քոչարեան նաեւ ընդունած է այս ամսուան ընթացքին Ֆրանսա այցելելու նախագահ Ժաք Շիրաքի հրաւերը:

ՍԵՊՏԵՄԲԵՐ 2000ԷՆ Ի ՎԵՐ ԱՌԱՋԻՆ ԱՆԳՍՄ ԸԼԼԱԼՈՎ

ՊԱՂԵՍՏԻՆՑԻՔ ՈՒՆԵՑԱՆ ԵՐԹԵՒԵԿԻ ԼՐԻԻ ԱԶԱՏՈՒԹԻՒՆ

Աքաւաի հնթիֆա-տալին սկսելին ի վեր (Սեպտեմբեր, 2000), առաջին անգամ ըլլալով պաղեստինեան ապահովութեան ուժերը վերադարձան իրենց դիրքերուն, ուրկէ հեռացած էին իսրայելեան ուժերը: Պաղեստինցի ոստիկանները 33 ամսուան մէջ առաջին անգամ ըլլալով ունեցան երթելի պատուութիւնը, նկատի ունենալով, որ իսրայել վերցուց գլխաւոր գնաճարներուն վրայ գնումն ուղի բոլոր անցարգելները: Ռոստիկանները՝ իրենց ինքնաշարժներով եւ վէնքերով պատուութիւն կը շրջէին մէկ դիրքէն միւսը:

Կապալի պարպումը իսրայելեան ուժերուն կողմէ մեծ քայլ մը կը նկատուի իսրայելու թեան ճամբու քարտէսի գործադրութեան գործընթացին մէջ: Իսրայելեան ուժերը հեռացան յատկապէս Պէյթ Հանունէն եւ Պէյթ Լահիայէն: Անոնց պարպած դիրքերը անմիջապէս գրաւուեցան պաղեստինեան ապահովութեան ուժերուն կողմէ, որոնք դիրքեր գրաւելու հետ սահմանին վրայ: Յիշեալ դիրքերուն յանձնումը փորձաքարի պիտի ենթարկէ պաղեստինեան իշխանութիւնը, որ խոստացած է արգիլել իսրայելի դէմ յարձակումները՝ պարպում շրջաններէն: Իսրայել առաջին անգամ ըլլալով նաեւ բացաւ Կապալի գլխաւոր մայրուղին, որ հիւսիսէն հարաւ կ'երկարի: Նախապէս, մայրուղին վրայ հաստատուած էին երեք անցարգելներ, որոնք կէս ժամնոց ճամբան քանի մը ժամուան կը վերածէին: Իսրայելեան ուժերը բացին նաեւ այլ մայրուղի մը, որ գրեթէ երեք տարիէ ի վեր փակ էր: Փակուած մնացին քանի մը ճամբաներ, որոնք կ'անցնէին հրէական բնակեցման վայրերուն մօտէն: Կը նախատեսուի, որ յառաջիկայ քա-

նի մը շաբթուան ընթացքին անոնք այլ բացուին: Իսրայելեան բանակը պաղեստինեան ապահովութեան ուժերուն յանձնեց նաեւ Կապալի Եգիպտոսի միացնող Ռաֆահի անցքը: Իսրայելացի եւ պաղեստինցի պաշտօնատարներ կը շարունակեն ապահովութեան հարցերու բանակցութիւնները՝ համաձայնութիւնները գոյացնելու համար Այսրյորդանի կարգ մը շրջանները պարպելու մասին: Պաղեստինեան աղբիւրներու համաձայն, իսրայելեան ուժերը այսօր պիտի հեռանան Բեթղեհէմէն, Պէյթ Սախուրէն, Պէյթ Ժալայէն եւ Խուտայրէն: Կապալին հեռանալու իսրայելի գլխաւոր պայմանն էր հակազդի տակ առնել ծայրայեղական շարժումներն ու անոնց հետեւորդները: Կապալի մէջ պաղեստինեան ապահովութեան ուժերու պատասխանատուն՝ Ռաշիտ Ապու Շպէք ըստ, որ ապահովութեան ուժերը կրնան

իրենց հակազդի տակ առնել պարպում շրջանները, սակայն արմատական շարժումներու հետեւորդները պիտաքափ ընելու մասին տակալին որեւէ որոշում չէ տրուած: Ապու Շպէք աւելցուց, որ իսրայելի հետ համաձայնութիւնը կը պահանջէ, որ վայրագութիւնը երկուստեք դադրի: Ան ըստ նաեւ, որ պաղեստինեան ապահովութեան ուժերը պատրաստ պիտի ըլլան ձեռքաւայելու պիտեալներ, եթէ կասկածիմ, որ անոնք իսրայելի դէմ գործողութիւններու կը պատրաստուին: Ապու Շպէք դիտել տուաւ նաեւ, որ իսրայել կը պահանջէ պիտաքափ ընել արմատականները, մինչքանակեցման վայրերու հրեաները «մինչեւ ակոսները պիտուած են» եւ որեւէ մէկը չի մտածեր պանոնք ապապիւնելու մասին: Մինչ այդ, պաղեստինեան շրջաններուն մէջ մասնակի քանի մը միջադէպեր արձանագրուեցան, հակա-

ԱՐՄԷՆ ՌՈՒՍԱՍԵԱՆ Կ'ԱՆԴՐԱԳԱՌՆԱՅ ԵՆԻՎԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌՆՉՈՒՈՂ ՀԱՐՅԵՐՈՒ ԱՐԾԱՐԾՄԱՆ



Հ. Յ. Դ. Հայաստանի Գերագոյն Մարմինի ներկայացուցիչ, Հայաստանի Ազգային Ժողովի արտաքին յարաբերութիւններու յանձնաժողովի նախագահ ընկ. Արմէն Ռուստամեան երէկ տուաւ մամուլի ասուլիս մը, որուն ընթացքին անդրադարձաւ Եւրոպական խորհուրդի խորհրդարանական վեհաժողովին (ԵՄԽՎ) Յունիսի նիստին եւ անոր ծիրէն ներս Հայաստանի առնչուող հարցերու արձարծման:

Ռուստամեան յայտնեց, որ վեհաժողովը յառաջիկայ Սեպտեմբերի իր նիստին վերստին պիտի քննարկէ Հայաստանի Ազգային Ժողովին ընթացքին 16 պատգամաւորներէ բաղկացած դիտորդական առաքելութեան անդամ Պեռնարա Շուէյնրիի գեկուցումին 53րդ յօդուածը, որուն համաձայն՝ վեհաժողովին մէջ հայկական պատուիրակութեան լիազօրութիւնները կրնան չվաւերացուի: Նշեալ առաջարկը կը վերաբարձուի եթէ հինգ երկիրներէն առնուազն 10 պատգամաւորներ այդ առաջարկը ներկայացնեն: Հարցը կը քննարկուի համապատասխան յանձնաժողովին կողմէ, որուն եզրակացութիւնը կ'արձարծուի Եւրոպական խորհուրդի խորհրդ-

ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՎԵՀԱՐԱՆԻՆ ՄԷՁ ՊԱՐԳԵԻԱՏՐԵՅ ԱԹՈՄ ԷԿՈՅԵԱՆՆ ՈՒ ԱՐՄԻՆԷ ԽԱՆՃԵԱՆԸ

«Արարատ» ֆիլմը, որ մէկ կողմէ թնդացուց հայաշխարհը եւ միւս կողմէ շարժապատկերները թուրքիան, երէկ անգամ մը եւս արդարորէն ու արժանաբար փառաբանուեցաւ, երբ անոր անպուկական բեմադրիչը՝ Աթոմ Էկոյեան եւ ֆիլմին մղիչ ուժը՝ Արսիւն Խանճեան Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսարանի (Անթիլիաս) վեհարանին մէջ պարգեւատրուեցան «Ս. Մեսրոպ» շքանշանով:

«Արարատ» կը մերկացնէր թուրքին, Յեղասպանութեան ուրացման քաղաքականութիւնը յամառօրէն շարունակող թրքական իշխանութիւններուն իսկական դիմագիծը յաշտ միջապային ընտանիքին: Իսկ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութիւնը, որուն Սուրբ Աթոռին Լիբանան հաստատումը ինքնին աղաղակող լուսազոյն ապացոյցն է թրքական հայաժամաբնի ու հակահայ քաղաքականութեան, երէկ անգամ մը եւս յուշեց թուրքին, թէ «կենդանի ենք տակալին», հակառակ ձերկամքին:

Արարատ, Անթիլիասի վեհարանին մէջ կայմակերպուած երեկոյին ընթացքին, Էկոյեան ամոլին ու անոնց «Արարատ» ին պարգեւատրման ընդմէջէն խորքին մէջ պարգեւատրուեցաւ ամբողջ հայութիւնը, այսպիսի պատկերներ ծնած ըլլալու ի պատիւ: Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. կաթողիկոսին կողքին ներկայ



էին Լիբանանի հանրապետութեան նախկին նախագահ Էլիաս Հըրաուի, նախարարներ, երեսփոխաններ, դեսպաններ, հոգեւոր պետեր, հոգեւորականներ, հայապային կուսակցութեանց եւ կայմակերպութեանց ներկայացուցիչներ, մտաւորականներ, մամուլի ներկայացուցիչներ, թղթակիցներ եւ հրատարակիչներ: Չեռնակը վարեցին լրագրող - հաղորդավարներ՝ Նշան Տէր Յարութիւնեան եւ Փո-

ԱՐԴԷՆ ՇՈՒԿԱՅԻ ԿՐԱՅ Է ԸԱՅԱՍՏԱՆԵՆ ՆՈՐ ԸԱՍԱՑ

ARZNI

NATURAL MINERAL SPRING WATER

«ԱՐԶՆԻ» ԲՆԱԿԱՆ ԿԱԶՈՎ ԸԱՅԿԱԿԱՆ ԶՈՒՐԸ

CHLORIDE HYDROCARBONATE SODIUM SILICATE MINERAL WATER

«ԱՐԶՆԻ» Ձեր առողջութեան համար ուղղակի աղբիւրն է հանքային ջուրը: Դրական ազդեցութիւն ունի ստամոքսային համակարգին վրայ: Թելադրելի է ստամոքսի բորբոքումը, աղիքային հիւանդութիւնները, լեարդի, փայծաղի եւ ստամոքսային այլ հարցեր տառապողներուն:

Sole Agent in Middle East SAHALCO, Beirut-Lebanon
Tel.: 03/201957 03/201967
Tel./Fax: 04/712409
www.arzni.am

ԽՄԵՅԷՔ «ԱՐԶՆԻ» Ձեր առողջութեան շնորհը

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ ԳՈՒՄԱՐԵՑ ԻՐ ԼԻԱԳՈՒՄԱՐ ՆԻՍՏԸ

Խորհրդարանը երեկ գումարեց իր լիազու- մար նիստը, որ կայացավ հանդարտ մթնոլորտի մեջ: Նիստին ընթացքին արծարծուեցան տար- բեր երկիրներու, որոնց կարգին՝ Սուրիոյ հետ Լիբանանի ունեցած գործակցութիւնը եւ դիւ- նագիտական յարաբերութիւնները:

Քննարկուեցաւ նաեւ մեքանիքի վճարումէն պէտք կ'ազատուի մամանակաշրջանի երկա- րազման հարցը:

Նկատելի էր, թէ հիմնական հարցերն ու դիւանագիտական նշանակումներու պարագան բացակայեցան խորհրդարանի նիստէն: Երես- փոխաններուն կողմէ կատարուած մէջբերում- ները զլիսաւորաբար լուսարձակի տակ առին սահմանադրութեան կառուցած մնալու, անով առաջնորդուելու եւ հաւասարակշռուած ձեւով գործելու անհրաժեշտութիւնը:

Նիստին զլիսաւոր օրակարգերէն էր կառա- վարութեան փոփոխութեան պատճառով կարգ մը պաշտօններու առնչութեամբ եղած նոր նշա- նակումները:

Ակնարկելով մագլցումով բանող պատերու նորութիւնը հաստատուեցաւ հարցին, խորհրդա- րանի նախագահ Նեպիի Պրորի պարմանք յայտ- նեց, թէ այդ հաստատումները տակաւին չեն տրուած եւ շեշտեց, որ կ'ա'մ ոչ ոք իրաւունք պի- տի ունենայ մագլցում օգտագործելու եւ կամ բո- յորին պիտի արտօնուի անոր գործածութիւնը, աւելցնելով, որ օրին խորհրդարանը այս առնչ- յութեամբ առաւ այն որոշումը, որ լաւագոյնն է ընդհանուրին համար:

Վարչապետ Հարիրի այս հարցին առնչու- թեամբ ըսաւ, թէ կարգ մը պատերու պարագային հաստատումներ ձգտուած են, իսկ ուրիշներու չեն ձգտուած, ինչ որ կը նշանակէ, թէ հարցին կարե- յի չէ հաւասար աչքով նայիլ:

ՆԱԽԱԳԱԿ ԼԱՀՈՒՏ ԸՆԴՈՒՆԵՑ ԻՐԼԱՆՏԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐԸ

Նախագահ Վոր. Էմիլ Լահուտ երեկ Պա- աստայի մէջ ընդունեց Իրլանտայի արտաքին գործոց նախարար Պրայն Քովինն ու անոր զլիսաւորած պատուիրակութիւնը: Նախագահ Լահուտ շեշտեց, թէ Միջին Արեւելքի մէջ անբող- ջական, արդար եւ կա- յուն խաղաղութեան հաստատումը պէտք է կայմէ այս առնչու- թեամբ կայացող բոլոր հանդիպումներուն, բանակցութիւններուն եւ խորհրդակցութիւն- ներուն առանցքը: Ան դիտել տուաւ, թէ խա- ղաղութեան հաստատ- ման համար անհրա- ժեշտ է, որ կողմերը համաձայնին եւ վճռեն, թէ պիտի գոր- ծադրեն բոլոր խոս- տումներն ու որոշում- ները, նշելով, որ Իս- րայէլ տակաւին վերջ- նական դիրքորոշում չ'որդեգրած:



Նախագահ Լահուտ ընդունեց նաեւ ար- տաքին գործոց եւ ար- տերկրի լիբանանցի- ներու հարցերու նա- խարար Ժան Օպէյլոր, որուն հետ քննարկեց Լիբանանի ներքին եւ արտաքին կեանքին վերջին իրադարձու- թիւնները, ինչպէս նաեւ՝ դիւանագիտա- կան նշանակումներու պարագան: Նախագահ Լահու- տի այցելուներուն կարգին էր նաեւ պաշտպանութեան նախարար Մահմուտ Համմուտ, որ նախա- գահին տեղեկացուց, թէ բանակն ու պաշտ- վական ուժերը պիտի հետապնդեն քառ- հատման ընկերու- թիւններուն գործու- նէութիւնը կասեցնե- լու աշխատանքները: Նախագահ Լահուտ ընդունեց նաեւ ՄԱԿի ընդհանուր քարտու- ղարի ներկայացուցիչ Լախտար Խարահիմն, Լիբանանի մէջ Ֆրան- սայի դեսպան Ֆիլիպ Տր Քուրթէն, նախկին երեսփոխան Ալլաէր Մամսուրը եւ բանակի Իրանաւատար Վոր. Միշէլ Սլէյմանը:

Հանդիպումին ըն- թացքին շեշտը դրուե- ցաւ Լիբանան - Իր-

լանտա սերտ յարաբե- րութիւններուն եւ եր- կու երկիրներուն մի- ջեւ առկայ գործակցու- թեան վրայ: Նախա- գահ Լահուտ եւ նա- խարար Պրայն Քովին նաեւ անդրադարձան Իրաքի հարցին առնչ- յութեամբ երկու եր- կիրներուն կեցուածք- ներուն եւ ահաբեկչու- թեան վերջ դնելու գծով անոնց վճռակա- մութեան:

Նախագահ Լահուտ ընդունեց նաեւ ար- տաքին գործոց եւ ար- տերկրի լիբանանցի- ներու հարցերու նա-

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

● ՎԱՐՉԱՊԵՏ Հարիրի Քրայթմի իր պայա- տին մէջ ընդունեց Ամերիկեան համալսարանի բարգաւաճման յանձնախումբի նախագահ տոքթ. Ռիչըրտ Տրպրսն ու Պէյրութի Ամերիկեան համալսարանի նախագահ տոքթ. Ճոն Ուոթըր- պրըին եւ անոնց հետ արծարծեց համալսարա- նի կացութիւնն ու անոր պայմանները:

● ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ նախարար Մահմուտ Համմուտ իր գրասենեակին մէջ երեկ ընդունեց երեսփոխան Իպրահիմ Պայանը, որուն հետ քննարկեց լիբանանեան ներքին կեանքին վե- րաբերող հարցեր, պաղեստինեան տագնապին առնչուող պարագաններն ու տակաւին շարու- նակուող բռնարարները:

● ԱՐՏԱՔԻՆ գործոց եւ արտերկրի լիբանան- ցիներու հարցերու նախարար Ժան Օպէյլոր հան- դիպում մը ունեցաւ Իրլանտայի արտաքին գոր- ծոց նախարարին հետ եւ անոր հետ արծարծեց շրջանային հարցերն ու յատկապէս պաղեստին- եան տագնապն ու խաղաղութեան քարտէսը: Նախարարը դրուատեց իրլանտացիներուն ունեցած դերակատարութիւնն ու դրական ներդրումը շրջանին ու անոր պարգացման գոր- ծընթացին մէջ:

Իրլանտացի նախարարը իր կարգին դիտել տուաւ, թէ Լիբանանի եւ Իրլանտայի կապերը միշտ սերտ եղած են եւ երկիրներուն միջեւ մնա- յուն գործակցութիւն գոյութիւն ունեցած է:

Օպէյլոր նաեւ տեսակցեցաւ ամերիկեան գոր- ժուներութեան պատասխանատու Քարոյ Քային հետ: Նախարարը շեշտեց, թէ պաղեստինեան տագնապին առնչութեամբ պէտք է միակամ քա- ղաքականութիւն վարել, որպէսզի կարելի ըլլայ դրական արդիւնքներու հասնիլ: Ան նշեց, թէ կարելի չէ շարունակել բռնութիւնը եւ անմեղ- ներու սպանդը: Քննարկուեցաւ նաեւ Իրաքի յետ պատերազմեան կացութիւնը:

● ՍՈՒՐԻՅԱՆ վարչապետ տոքթ. Մոհամէտ Մուրաֆա Միրո երեկ Դամասկոսի մէջ ընդու- նեց Լիբանանի վրասաշրջութեան նախարար Ալի Հասան Ապտալլան. հանդիպումին ներկայ էր նաեւ Սուրիոյ վրասաշրջութեան նախարարը: Տեսակցութեան ընթացքին քննարկուեցան եր- կու երկիրներուն միջեւ այս մարզի պարգացման ու բարգաւաճման կարելիութիւններն ու գոր- ծակցութեան սերտացումն ու ընդլայնումը:

● ԱՇՆԱՍԱՆՔԻ եւ փոխադրամիջոցներու նա- խարար Նեժիպ Միքաթի երեկ ՄԱԿի սննդեղէ- նի ծրագրի ներկայացուցիչին հետ ունեցած հանդիպումին ընթացքին ըսաւ, թէ Լիբանանի սերտօրէն կը գործակցի ՄԱԿի սննդեղէնի յանձնախումբին ծրագրին հետ՝ Պէյրութի եւ Թրիփոլիի նաւահանգիստները օգտագործելով դէպի Իրաք մարդասիրական օժանդակութեան արտածման համար:

● ԿԵՆՍՈՒՈՐՏԻ նախարար Ֆարէս Պուէյլ իր գրասենեակին մէջ ընդունեց Թունուսի դես- պան Նեպիի Չարրուքը, որ հանդիպումին արա- տին ըսաւ, թէ այցելութեան զլիսաւոր նպատա- կը նախարարը շնորհաւորելէն էր իր ստանձնած պաշտօնին համար: Տեսակցութեան ընթացքին արծարծուեցան նաեւ շրջանային եւ միջազա- յին հարցերն ու պարգացումները:

● ՍՈՒՐԻՅԱՆ մէջ պաղեստինեան խմբակցութիւն- ները հրապարակեցին հաղորդագրութիւն մը, որուն մէջ շեշտեցին, թէ պէտք է միասնակամ եւ ամուր ըլլալ բռնատէրերուն դէմ դնելու համար: Հաղորդագրութիւնը նաեւ քննադատեց իսրա- յէլեան բռնութեան լեցուն քաղաքականութիւնն ու գործած անմարդկային ոճիրները:

● ՊԱՍՏՊԱՆՈՒԹԵԱՆ փառատօնի պատրաստութեան աշխատանքներու ծիրէն ներս, Պէքալի քաղա- քապետ Անթուան Սալամէ յատուկ որոշումով մը յետակացուց երթելի ընթացքի փոփոխու- թիւնը եւ նշեց, թէ դիրքութիւններ պիտի տրուին վրասաշրջային ինքնաշարժներուն:

● ՏԵՂԵԿԱՏՈՒԹԵԱՆ նախարար Միշէլ Ար- մահա երեկ յայտարարեց Պիպլոսի փառատօնին ծրագրը: Ան նշեց, թէ այս փառատօնը կու գայ փաստելու, թէ Լիբանան մշակութիւնը ու հան- դիպման վայր է եւ ան կը համախմբէ պանազան ժողովուրդներու արուեստներ ու արժէքներ:

ՆԱԽԱՐԱՐ ԱՐԻՏԻ ԸՆԴՈՒՆԵՑ ԷԿՈՅԵԱՆ ԱՄՈԼԸ



Մշակոյթի նախարար Ղապի Արիտի երեկ ըն- դունեց «Արարատ» ֆիլմի բեմադրիչ Արոմ Էկոյեա- նը եւ դերասանուհի Արսինէ Խանճեանը: Անոնց կ'ընկերակցէր Հ. Յ. Դ. Լիբանանի Կեդրոնական Կոմիտէի անդամ ընկ. Յակոբ Բագրատունի:

Նախարար Արիտի դրուատեցով խօսեցաւ բե- մադրիչ Էկոյեանին, անոր բեմադրած գործերուն եւ արձանագրած յաջողութիւններուն մասին:

Հանդիպումին ընթացքին արծարծուեցան նա- եւ լիբանանեան եւ քանադական յարաբերութիւն- ները յատկապէս շարժապատկերի մարզին մէջ:

1924-79-2003

Patisserie Oriental

Rue du Fleuve, Hadjin, Nahr, Beyrouth
Tél.: 01/449273

«ՎԱՆԱՅ ՉԱՅՆ»ԷՆ ՀԵՏԵՒԵՅԷՔ
«ԱՍՏՂԱՀՈՅԼ»
ՀԱՂՈՐԳԱՇՄԱՐԻՆ

Ամէն Կիսօրեայ, կէսօր ետք ժամը 5:00ից «Վանայ Չայն»էն լսեցեք «Աստղահոյլ» հաղորդաշարին շաբաթական յայտագիրը:

Կիսօրեայ, 3 Յունիս 2003, կէսօր ետք ժամը 5:00ից յայտագիրը նուիրուած է Համագայինի «Գասպար Իփեկեան» թատերախումբի երկար տարիներու բեմադրիչ եւ դերասան՝

ԺՈՐԺ ՍԱՐԳՍԵԱՆԻ

Իր յուշերը կը պատմէ թատերախումբին երկար տարիներու դերասանուհի

ԳԱՐՍԷՆ ՏԷՐ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

Մի՛ մոռնաք ունկնդրելու «Աստղահոյլ»ը:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ազգային առաջնորդարանի ամառային ժամանա- կացուցը ձգտուած է հետեւեալ ձեւով.

- 3 ՈՒՆԻՍ, 2003
Երկուշաբթիէն Ուրբաթ ժամը 8:30էն 2:30
Շաբաթ՝ ժամը 8:30էն 1:00
- ԵՊՈՍՏՈՍ, 2003
Երկուշաբթիէն Ուրբաթ ժամը 8:30էն 2:30
Շաբաթ՝ փակ

ԴԻՒՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ

«ԱԶԳԱԿ»Ի ՖՈՆՏԻՆ

● Երուանդ Մոնոֆարեանի մահուան քառասունըփն առի- քով,
Տիկին Սիրվարդ Աջապահեան - Ասիեան 20 \$

ՄԱՀԱԶԴ

Տէր եւ տիկին Մարիա եւ Յակոբ Թօփաքալաշեան եւ զաւակուներ
Տէր եւ տիկին Արաքսի եւ Ալլաէր Սաաթճի եւ զաւակուներ
Տէր եւ տիկին Խաչիկ եւ Վիքի Պաքալաշեան եւ զաւակուներ
Տէր եւ տիկին Ժան եւ Ներմին Յակոբեան եւ զաւակուներ
Տէր եւ տիկին ՓոզէՖ եւ Սոնա Ուաքֆի եւ զաւակուներ
Տէր եւ տիկին Արթին եւ Շամիրամ Մկրտիչեան եւ զաւակուներ
Տիկին Սիրվարդ Աջապահեան եւ զաւակուներ
եւ համայն ազգականներ կը գովեն իրենց մօր, մեծ մօր, բրոնջ եւ հարազատին՝

ՏԵՆԻՉ ՊԱՔՔԱԼ ՊԱՇՏԵԱՆԻ
(ՕԳԵԿԱ՛ Տիգրանակերտ, 1925ից)

մահը, որ պատահեցաւ երկուշաբթի, 30 Յունիս 2003, առաւօտեան ժամը 7:00ին, յետ երկարատեւ հիւանդու- թեան:

Յուզարկաւորութեան արարողութիւնը պիտի կա- տարուի այսօր՝ Երեքշաբթի, 1 Յունիս, կէսօրէ ետք ժա- մը 1:00ին, Նոր Ատանա թաղի Ս. Աստուածածին եկե- ղեցուց մէջ, ուրիշ հանգուցեալին մարմինը պիտի փո- խադրուի Պուրճ Համուտի Ազգային գերեզմանատու- նը:

● Ներկայս ընդունիլ իբրեւ մահապլ:

● Ցաւակցութիւնները կ'ընդունուին հանգուց- եալին բնակարանը, Պուրճ Համուտի նախկին ուստիկանատան շէնք, Յոյ յարկ, Երեքշաբթի 1, Չորեքշաբթի 2 եւ Հինգշաբթի 3 Յունիսին:

AIR-KOOL
air-conditioning

Be COOL with AIR-KOOL

THE SUPER SILENT BRAND NEW HEAT-PUMP A/C WITH WARRANTY
Starting 250\$

Sole Agent:
G. Ayanian & Sons
Dora, (01)255222/3/4/5/6 - Gemmayzé, (01)447000-445396 - (03)627728/9
Fax: (01)265187-582357; E-Mail: gasons@dm.net.lb
www.ayanian.com

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ «ԲԱՐՍԵՂ ԿԱՆԱԶԵԱՆ» ԲՈՒԼԵՆ

Մեծանուն երգահան ԱՐԱՄ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆԻ
ճննդեան 100ամեակին առիթով՝

2002 - 2003 ՏԱՐԵՇՐՁԱՆԻ
ՇՐՋԱՆԱԲՐՏՆԵՐՈՒ ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐՈՒ ԲԱՇՆՈՒՄ
ԵՒ
ՏԱՐԵԿԱՆ ԸՆԾՈՒԵՏՈՒ ԸԱՍԵՐԳ

Տեղի կ'ունենայ Ուրբաթ, 4 Յունիս 2003, երեկոյան ժամը 7:30ից,
Amphitheatre Pierre Aboukhatereh մէջ,
Campus des Sciences Humaines, USJ.

ՀԱՅ ԴԱՏ

ՀԱՅ ԴԱՏ

ԹՈՒՐԲ ՊԱՇՏՈՆԱՏԱՐԸ ԿԸ ՁՐԷ ԵՐԿԽՕՍՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՊԱՐԶԱՄԻՏ ՄՕՏԵՑՈՒՄՆԵՐԸ

Թուրքիոյ արտաքին գործոց նախարարութեան հետախուզութեան եւ հետազոտութիւններու բաժնի վարիչ զեյնալ Էնօն Էնօն Թեքճան անցեալ շաբաթ վերադարձաւ Անգարա, Միացեալ Նահանգներ շրջապատուած մը ետք, որուն ընթացքին Ուաշինկթընի, Նիւ Եորքի եւ Լոս Անճելըսի մէջ հանդիպումներ ունեցաւ հայ անձնաւորութիւններու եւ կազմակերպութիւններու հետ:

Կողմերուն արդէն իսկ ծանր հարցերուն վերաբերած արձան: Աւելին՝ բարդ քաղաքականութիւն վաւարող թուրքերը հայերուն հաշուոյն յաջողեցան հասանելի իրենց նպատակին: Ամերիկահայերը հետեւեալ գործընթացին մէջ կուն կամ միտածանակ քանի մը հատին դիմեցին պատճառաբանելու համար զեւսական Թեքճանի հետ իրենց հանդիպումները:

Մինչ զեւսական Թեքճան ոչ մէկ յայտարարութիւն կատարեց իր այցելութեան մասին, անոր ազդեր պաշտօնակիցները, որոնք արտաքին քաղաքականութեան մէջ նուազ բարդ գործելաձեւ կ'որդեգրեն, բացայայտեցին հայերու հետ երկխօսութիւն ունենալու թուրքերու անակնկալ փափաքին ետին անոնց իսկական մտադրութիւնը:

1) Հայ-թուրք տագնապը կրնայ լուծուիլ միայն երկխօսութեան միջոցով: 2) Երկխօսութեան թրջական առաջարկը մերժելու պարագային Ուաշինկթըն հաշտ աչքով կրնայ չզիտել հայերը: 3) Հանդիպումը առիթ մըն էր թուրքերը տեղեկ պահելու հայկական պատճառաբանութեան ճշմարտութեան ճշմարտութեան մասին:

Պարզի «էյ. էն. էս.» պատկերասրահի կայանին համաձայն, ազերի պաշտօնատարներ իրենց զժողովութիւնը յայտնած են թրջական այս անսպասելի նախաձեռնութեան անհրաժեշտութիւնը: Լեւոն Ղարաբաղի տագնապին մէջ, աւելի քան տասնամեակէ մը քաղաքացիական կռիւնները, Ազրպէյճան կր վստահ թրջական ռազմական եւ քաղաքական գորակցութեան՝ դիմակայելու համար հայկական կողմը: Հետեւեալը, ազերիները մտաւարութիւն ունին, թէ թուրքերը կը լքեն գիւրեմք եւ հայերու հետ անկախ քաղաքականութիւն կ'որդեգրեն:

Երեք այս պատճառաբանութիւններուն մէջ ալ լուրջ թուրքերու տեղեկ պահելու հայկական պատճառաբանութեան ճշմարտութեան մասին: 1) Ցեղասպանութեան հարցը երկխօսութեամբ լուծուելու հարց մը չէ: 2) Ցեղասպանութիւնը իրաւոր գործողներու ժառանգորդները պարզապէս պէտք է ընդունին իրենց նախնայներու ոճիրները, բան մը, գոր թուրքերը պարզ չեն ու պար ընէ: Այն օրը, երբ թուրքերը պատրաստ ըլլան, հայերը բանակցութեան սեղան կը նստին անոնց հետ՝ համաձայնութիւն գոյացնելու անհրաժեշտ հատուցումներուն շուրջ:

Թուրքերը վստահեցուցին ազերիներուն, թէ հաստատ կը մնան իրենց ազերիամէտ եւ հակահայ քաղաքականութեան մէջ: Նոյնանման երաշխաւորութիւն մը տրուած էր ազերիներուն քանի մը տարի առաջ, «Հայ-թուրքական Հաշտութեան Յանձնաժողով»-ի թուրք անդամներէն մէկուն կողմէ, այս յանձնաժողովի ստեղծման առիթով: Այս վերջին նախաձեռնութիւնը եւս թրջական խաղ մըն էր Միացեալ Նահանգներուն եւ Եւրոպական Միութեան տալու այն թիւր տպաւորութիւնը, թէ թուրքիա «հայերու հետ կառուցողական երկխօսութեան» լծուած է:

2) Արգիլելու համար թուրքերուն հաւանական այն պնդումները, թէ հայեր կը մերժեն երկխօսութեան իրենց առաջարկը, պէտք չկար թուրքերուն հետ մեծ թիւով հայկական կազմակերպութիւններու եւ անհատներու հանդիպումներուն: Հայկական մէկ խումբի հետ հանդիպումը բաւարար պիտի չըլլար այդ ուղղութեամբ:

19 Յունիսին, «էյ. էն. էս.» կայանէն պատասխանելով լրագրողի այն հարցումին, թէ «այս հանդիպումները կր նպատակադրեն մեղմացնել թուրքիոյ վրայ Միացեալ Նահանգներուն եւ Եւրոպական Միութեան ճնշումը, Ազրպէյճանի արտաքին գործոց նախարար Վիլայէթ Կուլիբեկ Կարապետեանց «թուրքիա այսօր Եւրոպական Միութեան անդամակցութեան թեկնածու է: Այս կազմակերպութեան անդամակցութիւնը թուրքիոյ համար առաջնահերթ նպատակ է: Թուրքիոյ հետ բանակցութիւնները պիտի սկսին 2004ին, եւ յստակ է թէ թուրքիա ճնշումի կ'ենթարկուի»:

3) Թուրքերը, յատկապէս թուրքիոյ արտաքին գործոց նախարարութեան հետախուզութեան եւ հետազոտութիւններու բաժնի վարիչը, պէտք չունին Ցեղասպանութեան, թէ հայկական այլ հարցերու շուրջ ուսուցում: Անոնք վստահօրէն շատ լաւ դիտեն իրենց նախնիներու գործած ոճիրները: Աւելին՝ եթէ դեւսական Թեքճան պէտք ունէր լատեղեակ ըլլալու հայկական Ցեղասպանութեան շուրջ, պէտք կ'ար հայկական մօտ տասնեակ խումբերու անուն նոյն պատմութիւնը պատմելու համար:

Ինչպէս կը սպասուէր, զեւսական Թեքճանի հետ հանդիպումներուն ամերիկահայերը ոչ մէկ ինչպիսի լուծեցին: Անոնք պարզապէս ծառայեցին երկու

Եւրոպական խորհրդարանին կողմէ հայկական Ցեղասպանութեան վերաբերեալ առաջին բանաձեւի ընդունման 16րդ տարեդարձին օրը Յունիս 18ին, Ցեղասպանութեան ընդդիմախօսներու միութեան կողմէ հայտարարելու մը յղուած է խորհրդարանի նախագահ Փաթ Քոքսին՝ Թուրքիոյ խորհրդարանէն պահանջելով թէ հայկական Ցեղասպանութեան ճանաչումը:

հարցէն, թէ ի՞նչ քննարկեցին եւ որքան հաստատակամօրէն ներկայացուցին հայկական պահանջները, իրենք ինքնաբերաբար կ'օժանդակեն թուրքերուն, որոնք կ'ուզեն ամերիկացի եւ եւրոպացի խորհրդարանականները համոզել, թէ այլեւս պէտք չկայ բանաձեւեր ընդունելու հայկական Ցեղասպանութեան մասին:

Եթէ երբեք որեւէ կասկած կար թուրքերու նպատակներուն շուրջ, թուրքիոյ արտաքին գործոց փոխ նախարար Ուղար Զիլար անցեալ շաբաթ Ուաշինկթըն իր այցելութեան ընթացքին փարատեց ըլլոր կասկածները: «Թուրքիոյ Տէյլի Նիւզ» թերթը հարցրեց, թէ Զիլար Պուշի վարչակազմի անդամներուն հետ իր տարրերը հանդիպումներուն ընթացքին օգտագործած է հայերու եւ թուրքերու միջեւ «երկխօսութեան փաստը» Ուաշինկթընին հարցրելու համար: «Թուրքիոյ գաղտնիակցութիւնը» այսպէս կոչուած Հայկական Ցեղասպանութեան օրինակի մը վերաբերեալ եւ ընդգծած է այս հարցին գծով թուրքիոյ ակնկալութիւնը Միացեալ Նահանգներու կառավարութեան հետ հանդիպումներուն միջոցով:

Մինչ հայկական կազմակերպութիւնները պատրաստ թեքճանի հետ երկխօսութեան մէջ էին այն պարզամիտ ակնկալութեամբ, թէ այդ մէկը կ'օժանդակէ թուրքիոյ կողմէ Հայկական Ցեղասպանութեան ճանաչման, փոխ նախարար Զիլար Ուաշինկթընի «Նէշընըլ Փրէս Բլազ»-ին մէջ լրագրողներու կը յայտնէր, թէ ոչ երկխօսութիւնը, ոչ ալ քաղաքական ճնշումները կրնան մղել թուրքիան ճանաչելու հայկական Ցեղասպանութիւնը, որովհետեւ, ըստ թուրք պաշտօնատարին, ցեղասպանութիւն տեղի է ունեցած:

Միայն այսքան, թուրքերու հետ երկխօսութեան մասին:

ՅԱՐՈՒԹ ՍԱՍՈՒՆԵԱՆ
«Քալիֆորնիա Քուրիըր»

ՀԱՅՏԱՐ ԱԼԻԵՒԵՒԵՒ ՍԱՖԱՐ ԱՊԻԵՒ ԱԶՐՊԷՅՃԱՆԻ ԲԱՆԱԿԻՆ ԳՈՎՔԸ ԿԸ ՆԻՒՍԵՆ

Ազրպէյճանի նախագահ Հայտար Ալիեւ Ազրպէյճանի բանակի օրուան առիթով հրատարակած է ուղերձ մը, որուն մէջ յայտնած է, թէ պէտք է հզօրացնել Ազրպէյճանի բանակը, որովհետեւ առիկա անհրաժեշտ է Լեւոնային Ղարաբաղի տագնապին լուծման համար: Ան նշած է, թէ Ազրպէյճանի ազգային բանակը հիմնուած է 1918-1920ականներուն, եւ օրին մեծ դեր ունեցած է «Հայկական յարձակողապաշտ արարքներու դիմակալման մէջ»: Ալիեւ նկատել տուած է, թէ «բանակը 1990ականներուն բարեօրէն վիճակի մէջ էր, մասնակից կ'ըլլար քաղաքական ներքին հարցերու: Այս սխալները յանգեցուցին Ազրպէյճանի հողերուն 20 առ հարիւրին գրաւման»: Ազրպէյճանի նախագահը շեշտած է, թէ Պաքու հաւատարիմ կը մնայ Լեւոնային Ղարաբաղի տագնապի խաղաղ լուծման՝ դիւանագիտական բանակցութիւններու եւ միջազգային ընտանիքի գորակցութեան միջոցով: Այսուհանդերձ, յայտնած է 80ամեայ Ալիեւ, «բանակցութիւններու յաջող ելքը կախուած է Ազրպէյճանի բանակի հզօրացումէն»:

Իր կարգին, Ազրպէյճանի պաշտպանութեան նախարար Սաֆար Ալիեւ յայտնած է, թէ «ազրպէյճանական բանակի մարտունակութիւնն ու հմտութիւնը կ'արտօնեն, որ վերահաստատուի երկրի տարածքային ամրոցականութիւնը»: Բանակի օրուան նուիրուած հանդիսութեան մը ընթացքին Ալիեւ յայտնած է, թէ «բանակը կանոնաւոր ձեւով կը կատարէ դաշտային ռազմափորձեր, ունի անհրաժեշտ արհեստագիտական սարքեր, իսկ բարեփոխումները կ'ընթանան յաջողութեամբ: Թագմական կրթութեան համակարգը ամրոցութեամբ կը համապատասխանէ ՕՍԱՆի չափանիշներուն»: Անդրադառնալով Լեւոնային Ղարաբաղի տագնապին, Ալիեւ ասպանացած է Հայաստանին: Ըստ Ազրպէյճանի պաշտպանութեան նախարարին, «հայեր իրենք իրենց յաջողութիւնը վիճակին մէջ կը պատկերացնեն, սակայն կայունութիւնը փոխուած է ամրոցողով»: Ազրպէյճանական բանակը պատրաստ է ազատագրելու բռնադրաւուած տարածքները:

Անշուշտ, ոչ Ալիեւ, ոչ ալ Ալիեւ Ազրպէյճանի բանակին գովքը հիւսելով պիտի անդրադառնային այդ բանակին մէջ արձանագրուած մասուհան բարձր ցուցանիշներուն, զինուորներու առողջապահական վիճակին, հոն արձանագրուող սպանութիւններու եւ այլ յոռի երեւոյթներու եւ անբարեկամութիւններու: Նշենք, որ անցնող շրջանին գիտուորներու եւ սպաններու կողմէ հաւաքական դատաբանութիւնը պարտաւարկուած է, իրեն բողոք Ազրպէյճանի բանակին մէջ ծառայութեան եւ ապրուստի ոչ բարեկամատ պայմաններուն:

ԱԶՐՊԷՅՃԱՆ ՀԱՇՈՒՐԵՏՈՒԹԻՒՆ ԳԻՏԻ ՊԱՀԱՆՁԷ ՄԻՆՍՔԻ ԽՄԲԱԿԵՆ

Ըստ Պարզի «Կապիթ 525» թերթին, Ազրպէյճանի Միլի Մեծլիսի (խորհրդարան) գիւղատնտեսական քաղաքականութեան յանձնաժողովի նախագահ Հայտար Իպրահիմով վերջերս յայտնած է, թէ Յունիս 5-9ին Հոլանտայի մէջ տեղի ունենալիք Եւրոպական խորհրդի խորհրդարանական վեհաժողովի (ԵՆԽՎ) ամառնային նստաշրջանին ընթացքին Ազրպէյճանի պատուիրակութիւնը մտադիր է ԵԱՀԿ Մինսքի խմբակէն հաշուետուութիւն պահանջել՝ իր կատարած աշխատանքին գծով: Ան դիտել տուած է, որ այդ մէկը կատարելով, Ազրպէյճանի պատուիրակութեան նպատակն է աշխուժացնել 1992ին ստեղծուած Մինսքի խմբակի գործունէութիւնը:

Նշենք, որ ԵՆԽՎ-ի մօտ Ազրպէյճանի պատուիրակութեան կազմը ընդլայնուած է եւ այժմ կ'ընդգրկէ մարդկային իրաւանց խորհրդարանական յանձնաժողովի նախագահի տեղակալ Ռապիլ Սալախովն ու Միլի Մեծլիսի պատգամաւոր Սայաթ Արանը:

ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԾԱՆԱԶՄԱՆ ՎԵՐԱԲԵՐԵԱԿ ԽՆԴՐԱԳԻՐ ԵՒՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ

Եւրոպական խորհրդարանին կողմէ հայկական Ցեղասպանութեան վերաբերեալ առաջին բանաձեւի ընդունման 16րդ տարեդարձին օրը Յունիս 18ին, Ցեղասպանութեան ընդդիմախօսներու միութեան կողմէ հայտարարելու մը յղուած է խորհրդարանի նախագահ Փաթ Քոքսին՝ Թուրքիոյ խորհրդարանէն պահանջելով թէ հայկական Ցեղասպանութեան ճանաչումը:

Ցեղասպանութեան ընդդիմախօսներու միութեան կողմէ հայտարարելու մը յղուած է խորհրդարանի նախագահ Փաթ Քոքսին՝ Թուրքիոյ խորհրդարանէն պահանջելով թէ հայկական Ցեղասպանութեան ճանաչումը:

Հուշակազմը ստորագրած է 11,000 հոգի, որոնք 10,000ը թուրքիոյ քաղաքացիներ են:

ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԾԱՆԱԶՄԱՆ ԿՈՉՄԱՐԿԱՅԻՆ ԻՐԱՆԱՅ ՍՈՒՄԵՒ ՄԸ ԿՈՂՄԷ
ԱՅՓ կը տեղեկացնէ, թէ Մարդկային Իրաւանց Միջազգային Դաշնակցութիւնը (IFHR) Յունիս 25ին կ'ոչ ուղղած է թուրքիոյ, որ մէկուկէ միլիոն հայերու ջարդը չէ ունեցած:

Ճանաչող իրբեւ ցեղասպանութիւն: Սոյն կազմակերպութիւնը թուրքիոյ վարչապետ Ռեճեփ Թայիպ էրտողանի ուղղուած բաց նամակին մէջ յայտնած է, թէ մտահոգ է թուրքիոյ կրթական ծրարիւն մէջ ներառուած կէտերով, որոնք կը վերաբերին փորձառականութիւններուն, յատկապէս հայերուն: Այդ կէտերը կը խեղաթիւրեն պատմութիւնը, փորձելով «փաստել», թէ Հայկական Ցեղասպանութիւն տեղի չէ ունեցած:

ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ «ԱՆՀԻՄՆ ՊՆԴՈՒՄ»ՆԵՐՈՒՆ ԴԵՄ ԹԻՔԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ

«Թըրքիոյ Տէյլի Նիւզ» օրաթերթը կը հարցրէր, քե Առաջին Աշխարհամարտից, Վանի, Մուշի, Պիլիսի, Արարատի եւ Իգլիի մէջ հայկական «աւազակախումբերու» կողմէ ջարդուած «գոհ»երու կազմակերպութիւնները որոշած են կազմել միացեալ դաշնակցութիւն մը:

Կազմակերպութիւնները յայտարարութեամբ մը նշած են, քե Դաշնակցութեան նպատակը պիտի ըլլայ պաշտպանել իրաւունքները այն անհատներուն, որոնք յիշեալ շրջանին «ջարդուած» են քաղաքացիներու: Անոնք դիտել տուած են, քե Դաշնակցութիւնը Հայկական Ցեղասպանութեան «անհիմն պնդումները» կողմէ պիտի ներկայացնէ ՄԱԿին եւ մարդկային իրաւանց կազմակերպութիւններու: Յայտարարութեան մէջ անոնք նաեւ նշած են, քե Դաշնակցութիւնը պիտի կազմակերպէ սեմինարներ, գիտաժողովներ, խորհրդաժողովներ եւ կլոր սեղան, եւ պիտի հիմնէ հայկական քաղաքացիական օստաններու կեդրոն մը:

«Հայերը աւելի քան 500 հազար ամեղ իսլամներ սպանցեցին Ա. Աշխարհամարտի ընթացքին: Այս ծիրէն ներս Դաշնակցութեան նպատակն է փաստել, քե հայկական Սփիւրթին եւ յայտնի կողմէ Հայկական Ցեղասպանութեան անհիմն պնդումները սխալ են», ըստ է յայտարարութեան մէջ:

ԹՈՒՐԲԵՐՈՒ «ՉԱՆ ԳՈՒՄԱԾԱՅԻՆ ԳԵՐԵԶՄԱՆ ՆԵՐՈՒ» ԲԱՑՈՒՄԻՆ ՄԱՍԵՆ ԱԿՑԵԼՈՒ ՀՐԱԻԷՐ՝ ՀԱՅ ՊԱՏՄԱԲԱՆԻՆ...

Հայրենի «Ազգ» օրաթերթը Յունիս 26ի իր թիւով կը հարցրէր, թէ թուրքիոյ պատմագիտական ընկերակցութեան նախագահ Կարօ Մ. Երուստի Հայաճօղլու Յունիս 10ին նամակ մը յղած է Հայկական Ցեղասպանութեան թանգարանի անօրէն դոկտ. Լաւրենտի Բարսեղեանի, զայն հրաւիրելով, որ մասնակցի 1918ին Կարսի մէջ հայերու կողմէ «սպաննուած իսլամներու գանդուածային գերեզմաններու բացումին»: Նամակին մէջ Հայաճօղլու գրած է՝ «Յարգելի՛ դոկտ. Բարսեղեան, արխիւային փաստաթուղթերու համաձայն, 1918ին հայկական աւազակախումբեր Կարսի Դերեջիկ գիւղին մէջ սպաննած են 360 իսլամներ: Արխիւներու եւ գրականութեան մասնակրկիտ ուսումնասիրութիւնները ցոյց տուած են, որ անոնք 15-16 Ապրիլ 1918ին, 371 իսլամներ, մեծ մասամբ կիներ եւ երեխաներ հաւաքած են հիւանդանոցի մը մէջ եւ գանդը հրկիցած: Անոնցմէ 360ը սպաննուած են եւ միայն 11ը՝ փրկուած»:

Այդ ղէպքին վայրը վերածուած է գանդուածային գերեզմանոցի, ինչ որ յայտնի դարձած է արխիւային հետազոտութիւններէ ետք:

Թրջական պատմագիտական ընկերակցութիւնը Յունիս 30- Յունիս 1 2003ին պիտի կկիս այդ գանդուածային գերեզմանոցի պեղումին աշխատանքներուն:

Մենք կը փափակեմք հրաւիրել ձեզ՝ իրբեւ վկայներ կայ գտնուելու գանդուածային գերեզմանի բացումի աշխատանքներուն: Այս առիթով մենք շնորհակալ կ'ըլլանք, եթէ դուք մեզ մինչեւ Յունիս 20, 2003 տեղեկ պահէք ձեր մասնակցութեան մտադրութեան մասին:

Ձեր կեցութեան ծախսերը պիտի հոգայ Կարսի մեր ընկերակցութիւնը»:

Յունիս 20ին դոկտ. Լաւրենտի Բարսեղեան հետեւեալ պատասխան - նամակ յղած է Հայաճօղլուի:

«Յարգելի՛ փրոֆէսօր, ստացայ Յունիս 30-1 Յունիս 10ին Կարս գտնուելու ինձն ուղղուած ձեր հրաւերը: Ցաւօք չեմ կրնար մասնակցիլ ձեռ եւ Կարսի նահանգի դեկալարութեան կազմակերպած շոյին, որ կրկին կը վկայէ, թէ ձեր կառավարութիւնն ու թուրք պատմաբանները կը շարունակեն նեղափոխել պատմութիւնը եւ ճշմարտութիւնը»:

Դիտել տալով, որ այդ պեղումներուն առաջին հերթին պէտք է հրաւիրուէին մասնագէտներ, որոնք կրնան հաստատել գտնուած գանդերու ցեղային յատկանիշները եւ ցոյց տալ, թէ անոնք իրականութեան մէջ ո՞ր ազգի մարդոց գանդերն են, ոգոս. Բարսեղեան շարունակած է. «Ես կը պատրաստուելմ ձեզի աւելի ընդարձակ կազմակերպութիւններուն յիշեցնել, որ 12 Մարտ 1918ին թրջական գործերը իրգրումը գրաւելէն ետք Քեազիմ Քարապետի վարչապետի հրամանով հրատարակուած էր զայն զգուշացնելու միջոցով: Բարսեղեան շարունակած է իր փափակեալ ակնառես ըլլալ հաւաքական այդ գերեզմաններու բացումին, սիրով կը հրաւիրեմ ձեզ եւ իմ վրաս կը վերցնեմ ձեր բոլոր ծախսերը», եզրափակած է ան:

Նշենք, որ դոկտ. Բարսեղեան «Ազգ»-ի թղթակիցին յայտնած է, թէ թրջական պատմագիտական ընկերակցութիւնը վերոյիշեալ գրութիւնը ուղղակիապէս է տարբեր երկիրներու մէջ ընդհանուր հայ գիտնականներու, որոնք կը պրոպոզի Հայկական Ցեղասպանութեան հարցերով:

Միջապալին Քաղաքական Կեանք

ՓԱՐԻՉԻ ԶԵՐԲԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿՐ ԲԱՅԱՅԱՅՏԵՆ ԻՐԱՆԻ ԳԾՈՎ ԱՄԵՐԻԿԵԱՆ ԾՐԱԳԻՐԻՆ ՄԵՉ ԳՈՅՈՒԹԻՒՆ ՈՒՆԵՅՈՂ ԴԵՂՔԵՐԸ

Վերջերս երբ ֆրանսիական ոստիկանությունը ձերբակալեց Մուհամմադ Նաժարի կազմակերպության 150 անդամներ, իրանեան ընդդիմադիր զինեալ խմբակներն անդամալուծող հարուած մը հասցնելէն աւելին ըրին: Փարիզի արուարձաններուն մէջ այդ ձերբակալութիւններու արշաւը լուսարձակի տակ առաւ Ուաշինկթընի շփոթն ու անմիասնակամութիւնը, ինչ կը վերաբերի իրանի անբաղձալի վարչակազմին:

Իրանի մէջ վարչակարգի փոփոխութիւն յառաջացրելու յոյսերը բարձր են Ուաշինկթընի պատասխանատուներուն մօտ յատկապէս Թեհրանի մէջ տեղի ունեցող ուսանողական ցոյցերուն լոյսին տակ: Ուաշինկթընի պահպանողականները իրենց գրաւը դրած էին Մուհամմադ Նաժարի կազմակերպութեան վրայ, հաւատալով, թէ որեւէ հարուած անոնց կողմէ վերջապէս կը տապալէ մոլլաները կամ գոնէ կը նպաստէ այդ աշխատանքներուն: Սակայն, Փարիզի մէջ այդ կազմակերպութեան գլխաւոր ղեկավարներուն ձերբակալութիւնը խանգարեց այդ ծրագիրները:

Մուհամմադ Նաժարի կազմակերպութեան մէջ իրանի Ընդդիմութեան Ազգային խորհուրդը Վերջին աշխարհիկ խմբակ մըն է, որ օգնած էր Շահը տապալելու աշխատանքներուն, 1979ին: Երբ հետագային իրանեան հանրապետութեան մէջ աւելի լայն մասնակցութիւն պահանջելու պատճառով խորհուրդը արտաքսուեցաւ երկրէն, ան ապաստան գտաւ Փարիզի, Նորվեկիոյ եւ Միացեալ Նահանգներուն մէջ, ուր տակաւին կը գործէ: Հետագային ան հաստատուեցաւ Իրաք, իբրեւ զինեալ կազմակերպութիւն, եւ վայելեց Մատամ շիրազիին հովանաւորութիւնը:

Ուաշինկթընի մէջ հակասական տրամադրութիւններ կան մուսուլմաններուն նկատմամբ: Անոնց ղէմ տրամադրուած են արտաքին գործոց նախարարութիւնը եւ, կարգ մը քոնկրէտականներ, իսկ անոնց հետ գործակցութեան համաձայն են պաշտպանութեան նախարարութիւնը եւ այլ քոնկրէտականներ: Նշենք, որ իրանի ազգայնական դասը կը զօրակցի անոնց, մինչ ժողովուրդին մեծ մասը դաւաճան կը նկատէ զանոնք:

Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարարութիւնը մուսուլմանները ահաբեկչական կազմակերպութիւն յայտարարեց 1997ին: Հակառակ 150 ամերիկացի քոնկրէտականներու բողոքին, այդ դիրքորոշումը անփոփոխ մնաց: Եւրոպական Միութիւնը եւս ահաբեկիչներ կը համարէ զանոնք:

Հակառակ ահաբեկիչներ զասկարողումին, պաշտպանութեան նախարարութիւնն ու իր տեսակէտը բաժնողները այդ կազմակերպութիւնը կը նկատեն իբրեւ կարեւոր գործոն թեհրանի կողերական վարչակազմը տապալելու: 15 Ապրիլին, Միացեալ Նահանգներու կեդրոնական հրամանատարութիւնը յայտարարեց, թէ զի-

նադուլի համաձայնութիւն գոյացուցած էր մուսուլմաններուն հետ, փոխարէնը խոստանալով անձեռնմխելի պահել իրենց կազմակերպութիւնը:

Յստակ է, որ անոնք պիտի պահուէին իբրեւ տեղեկութիւններու աղբիւր եւ մոլլաները վախցնելու միջոց: Իրանի եւ Միացեալ Նահանգներու մէջ բողոքի ցոյցերէն ետք, սակայն, զինեալները միայն երեւութապէս զինամիջոցներու յանձնելով իրենց ծանր զէնքերը:

Փաթիլը Քլաուսըն եւ Տանիէլ Փայփս, Փօլ Վոլֆփօլիցի եւ այլ յարձակողական քաղաքականութեան ջատագուցներու հետ կապեր ունեցող պահպանողական յօդուածագիրներ, Մայիսին «Նիւ Եորք Փոսթ»ին մէջ գրեցին, թէ Ուաշինկթըն պէտք է այդ կազմակերպութեան վերջնէ «ահաբեկիչ» որակումը, այն նկատարուածով, որ անոնց ջանքերը կրնան յառաջ տանիլ շրջանին մէջ ամերիկեան շահերը:


Քլաուսըն եւ Փայփս արտացոլացուցին Փենթագոնի ներկայի մտածելակերպը: «Նիւ Եորք Տէյլի» 6 Յունիսի թիւին մէջ լոյս տեսաւ նախկին «Մի. Այ. Էյ.»-ի եւ արտաքին գործոց նախարարութեան աշխատակից Լարի ձոնընի մէջ արտայայտութիւնը, որ կ'ըսէ, թէ «Յատուկ Մրագիրներու Գրասենեակ»ը պատրաստ է ձեռք բերարելու «էմ. Բէյ. Օ.»-ին եւ օգտագործելու զանոնք՝ ճնշում բանեցնելու համար իրանի վրայ»:

Փարիզի ձերբակալութիւնները լուրջ վնաս հասցուցին կազմակերպութեան: Ձերբակալուեցան կազմակերպութեան խորհրդանախկան ղեկավար Մարեան Ռաթաւի եւ ամուսինը՝ Մասուուտ Ռաթաւի, որ կազմակերպութեան իսկական ղեկավարը կը համարուի, ինչպէս նաեւ անոնցմէ գրաւուեցաւ 1,3 միլիոն տոլար: Ասիկա ծայր տուաւ բողոքի ցոյցերու ամբողջ Եւրոպայի տարածքին: Յատկապէս Փարիզի ձերբակալութիւններուն անդրադառնալով, արտաքին գործոց նախարարութեան բանրեր Ֆիլիպ Ռիքըր միայն նշեց, թէ «մեծ վստահար կը քաջալերենք ահաբեկչական խմբակներու ղէմ առնուած որեւէ քայլ աշխարհի մէջ»: Սակայն իրաքի մէջ Միացեալ Նահանգներու «վերակացու» Փօլ Պրեմըր աւելի յստակ էր, երբ Պաղատտէն ըսաւ, թէ «Մուսուլմանները ահաբեկչական խմբակ մըն է եւ եթէ Ֆրանսացիները ձերբակալած են անոնցմէ ոմանք, ապա ես ուրախ եմ տեղեկանալուս»:

Իրանի ընդդիմադիր խմբակները կը կասկածին, թէ ձերբակալութիւնները հետեւանքն էին Ֆրանսայի եւ իրանի կառավարութիւններուն միջեւ գոյացած համաձայնութեան մը: Սակայն, Լոնտոնի «Ֆայնէնշըլ Թայմ»ը եւ «Տը Նիւ Եորք Թայմ»ը գրեցին, թէ գործողութեան նպատակն է նաեւ ամերիկեան տեղեկատուական գործակալութիւնները:

«ՓԱՄԻՅԻՔ ՆՈՒՉ ԱՐԵՎԻՍ»

ՍԵՌ, ՍՈՒՏԵՐ ԵՒ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՆԱԽԱԳԱՆՆԵՐ



Ճորձ Պուշ

Ուել անհատ, որ վերջին տարիներուն կը հետեւի Միացեալ Նահանգներու քաղաքականութեան, կրնայ դիւրաւ եզրակացրել, թէ սեռային յարաբերութիւններու մասին ստեղծ լուրջ յանցանք մըն է՝ արժանի պաշտօնագրեր կուսի, մինչ երկիրը դէպի պատերազմ առաջնորդելու մասին ստեղծ հազիւ թէ յիշատակութեան արժանի ըլլայ:

Այլապէս ինչպէս կարելի է բացատրել Պիլ Քլինթընի եւ Ճորձ Պուշի նկատմամբ բոլորովին տարբեր վերաբերմունքը: Անշուշտ բազմաթիւ տարբերութիւններ կան երկու պարագաներուն միջեւ: Նախկին նախագահ Քլինթընը ճշմարտութիւնը խօսիլ երդուել էր ետք էր, որ ստեղծ Մոնիթինգ Լուինսքի մասին իր յարաբերութեան մասին Պուշի բացայայտ սուտ յայտարարութիւնը, թէ իրանի միջոցով փորձած էր զննել:

Քլինթընը աւելին էին քան սոսկական չափազանցութիւններ:

Կարելի էր, որ մէջըրբուեցաւ Պուշի կողմէ իր «Սթէյթ աֆ տը Եունիթը» պատգամին ընթացքին, կը բացատրէր, թէ ինչպէս իրաք հիւսնական ուժերը պատրաստելու համար իւրանի միջոցով փորձած էր զննել:

որպէսզի ծածկէ պատերազմի իր գլխաւոր դրոյապատճառները, ինչպէս՝ իրաքեան քարիւղի վրայ հակակշիռ ունենալը, որուն համար պատերազմի երթալը երբեք արդարանալի չէր:

Վստահարար Պուշ ոչ մէկ առիթ կը փախցնէ ձեւացնելու, թէ ինք խիստ է, երբ հարցը կը վերաբերի Ամերիկեան պաշտպանելու: Սակայն ան անմտանցութեան կարգ մը լուրջ սպառնալիքներու ղէմ անտարբեր կը թուի ըլլալ: Անցեալ շաբաթ Գոնկրէսի գրասենեակներէն մէկը ստեղծակցուց, թէ Պուշի վարչակազմը չի պաշտպաներ աշխարհի տարածքին գտնուող հիւսնական հարկուրաւոր կեդրոնները, ուր կ'է ահաբեկիչներ կրնան հիւսնական նիւթեր ձեռք ձգել:



Պիլ Բլիթթըն

Բնաջնջումի զէնքեր, երդման տակ կատարուած էր, սակայն Պուշ ստած էր իր ժողովուրդին, որովհետեւ ամերիկեան գաղտնի սպասարկութիւնները ոչ մէկ փաստ ունէին իրաքի մէջ հաւաքական ընթացքներու գոյութեան մասին:

Բայց արդեօք այս տարբերութիւնը բաւարար է: Այսինքն երգման տակ ստեղծ սխալ է, բայց ամերիկացի ժողովուրդին ներկայացուցողները կարելի է գտնել:

Ի վերջոյ երբ Պուշ նախագահի պաշտօնը ստանձնեց, երկուսն տակ խոստացաւ «պահել, պահպանել Միացեալ Նահանգներու սահմանադրութիւնը», ինչ որ կը նշանակէ, թէ ան պէտք է կառուցած մնայ ամերիկեան ժողովուրդը վարչութեան սկզբունքներուն, որ բնականաբար կ'ենթադրէ շատ ժողովուրդին:

Ոմանք կը պնդեն, թէ Պուշ շատեց, այլ պարզապէս չափազանցեց: Սակայն իրաքի զէնքերուն մասին իր ամբաստանութիւնները:

Անցեալ Մարտին Սպիտակ Տան հակահարկչութեան գրասենեակներուն հրատարակած Ռանտ Պիթք, «Ուաշինկթըն Փոսթ»ին հետ վերջերս կատարած իր հարցազրոյցին մէջ ըսաւ, թէ հակահարկչական արշաւը պարզապէս բարոյաբար է, եւ խորքին մէջ շատ մը թերացումներ կան այդ ժողովուրդները:

Նախագահի մը վստահութեան մեծագոյն խանտուութիւնը իր քաղաքացիները պատերազմի ուղարկելու կը վերաբերի: Պատերազմ յայտարարելու համար սուտ խօսիլը վստահութեան մեծագոյն խախտումն է:

Ի վերջոյ պատերազմը շատ աւելի ծանր հետեւանքներ ունի, աւելի ծանր, քան Քլինթընի սեռային արկածախնդրութիւնները...

Եթէ այս սեմարիոյին հետեւինք, ապա Պուշ գտաւ շինծու բացատրութիւն մը, թէ իրաք վտանգ կը սպառնայ Միացեալ Նահանգներու (տեսանք թէ այդպէս չէր ճշմար-

տակ Տան հակահարկչութեան գրասենեակներուն հրատարակած Ռանտ Պիթք, «Ուաշինկթըն Փոսթ»ին հետ վերջերս կատարած իր հարցազրոյցին մէջ ըսաւ, թէ հակահարկչական արշաւը պարզապէս բարոյաբար է, եւ խորքին մէջ շատ մը թերացումներ կան այդ ժողովուրդները:

Նախագահի մը վստահութեան մեծագոյն խախտումն է:

Ի վերջոյ պատերազմը շատ աւելի ծանր հետեւանքներ ունի, աւելի ծանր, քան Քլինթընի սեռային արկածախնդրութիւնները...

Եթէ այս սեմարիոյին հետեւինք, ապա Պուշ գտաւ շինծու բացատրութիւն մը, թէ իրաք վտանգ կը սպառնայ Միացեալ Նահանգներու (տեսանք թէ այդպէս չէր ճշմար-

ՆԿԱՏԻ ԱՌՆՈՒԵԼԻՔ ՊԱՏՄԱԿԱՆ ՓՈՐՁԱՌՈՒԹԻՒՆ ՄԸ

11 Սեպտեմբեր 2001ի յարձակումներուն պատճառով քաղաքական աշխարհագրութեան լուսանցք քրուած Լատինական Ամերիկեան պէտք է յաջողի շրջանին մէջ համարկուելու իր աշխատանքին մէջ, որպէսզի իր ներկայութիւնը փաստէ միջազգային ընդունելի վրայ: Հարցը կը ծագի, թէ ո՞վ պիտի ըլլայ անջնորդող պետութիւնը՝ Պարագվայ, թէ Միացեալ Նահանգները:

Պարագվայի մայրաքաղաք Պարագվայի գարձաւ Մերքոսիւրի շարժիչ ուժը՝ շնորհիւ այն մաքսային միութեան, որ ստեղծուեցաւ 1991 թուականին Արժանութիւնի, Պարագվայի, Փարակուէլի եւ Ուրուկուէլի միջեւ: Ուաշինկթընը կը խօսի 2005ի սեմին ամերիկացիներուն համար ազատ փոխանակման հսկայ տարածութեան մը մասին, որուն մաս պիտի կազմեն ամերիկեան ցամաքամասի բոլոր երկրները, բացի Քուպայէն: Մէկ կողմէ գերակատար է Պարագվայի նախագահ Լուիս Ինիասիո Լուլա Տա Սիլվա, նոր յոյս մը՝ ձախիտ համար, իսկ միւս կողմէ՝ հանրապետական Ճորձ Պուշ: Ինչորբէր չի սահմանափակուիր այս երկու ընտրանքներով:

Արժանութիւնեան տաքսային խանգարում մը յառաջացուց Մերքոսիւրի մէջ, հակառակ անոր որ Չիլի եւ Պուրիլիա այս մաքսային միութեան անդամ դարձան, իսկ Վենեսուէլա անդամակցութեան դիմում ներկայացուց: Սակայն Ուրուկուէլի ձախիտ այն յայտարարութիւնը, թէ 2004ին ինք ընտանական յաղթանակ մը պիտի արձանագրէ, պիտի ամրապնդէ քաղաքական մերձեցումները Հարաւային Ամերիկայի մէջ:

Եթէ Միացեալ Նահանգներ կը խօսին ուրիշ առաջ-

նահերթութիւններու մասին, ապա այս ձեւով «Ամերիկեան ամերիկացիներուն» Մոնրոյի (Միացեալ Նահանգներու նախկին նախագահ «Ա.») հաւատարմութեան կառուարպէս մէկ կողմ կը դրուի: Մերքոսիւրի հարաւոր ամերիկեան ընդարձակ միութեան մը վերածուելը կրնայ հակադրուիլ Միացեալ Նահանգներու շահերուն:

Մերքոսիւրը շարժող զլուսաւոր ուժերը իրենց մտքին մէջ միայն մէկ օրինակ ունին, եւ այդ օրինակը Եւրոպական Միութիւնն է, որուն ընդմէջէն բոլորն ալ կը տեսնեն գերագանց յարաբերութիւն ստեղծելու գրաւականը:

Կամուրջներուն գոյութիւնը աւելի կարեւոր դարձած է իր իսկական եւ փոխաբերական իմաստներով: Ճիշդ կը թափուի շրջանը օժտելու ցամաքային, գետային եւ օդային հաղորդակցութեան միջոցներով:

ՆՈՐ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Կը թուի, թէ իր ընդլայնումին պատճառով երկփեղկուած Եւրոպական Միութիւնը տեղի տալու տրամադրութիւններ չի յայտնէր: Սպանական, Ֆրանսական, գերմանական եւ բրիտանական ներդրումները նոր յարաբերութիւններ հիւսնեցին Ատլանտեանի երկու ափերուն վրայ: Միացեալ Նահանգներու անկախութեան եւ Ֆրանսական Յեղափոխութեան ի վեր Լատինական Ամերիկեան կը գարգացնէ հաստատ երկխօսութիւն մը Եւրոպայի եւ Միացեալ Նահանգներու հետ: Այստեղ հարցը կը վերաբերի յատկապէս ամերիկեան մշակութային մէկ առանձնայատկութեան:

